ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 20-21-13

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԻՍՏԻ

03 դեկտեմբերի 2020թ. քաղ. Երևան

Նախագահությամբ՝ Ռ. Սինոյանի

անդամներ՝ Հ. Ռշտունի
Ա. Ալաբերքյան
Վ. Բերակչյան
Տ. Իսրաելյան
Բ. Ղալոյան

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. 26/11/20թ. «Լեռնային Արցախ»-«Նորավանք» (ԱԽ068) խաղի մասին.

Դաշտի տեր ակումբի մի քանի ֆուտբոլիստների մարզաշապիկներին ազգանունները գրված չէին: «Նորավանք» թիմի դարպասապահի մարզաշապիկին ազգանունը գրված չէր:

2. 27/11/20թ. «Ալաշկերտ-2»-«ԲԿՄԱ» (ԱԽ061) խաղի մասին.

Խաղի ժամանակ մարզադաշտում «Ալաշկերտ-2» թիմի պահեստայինների նստարանի մոտ կողմնակի մարդիկ էին գտնվում: Առանց սանիտարական կանոնները պահպանելու: Ֆուտբոլիստներից մեկը (Նիկիտա Տանկովը) խաղում էր 22 համարի համազգեստով, որի մեջքին գրված էր ուրիշ ազգանուն՝ Ալոյան:

3. 30/11/20թ. «ԲԿՄԱ»-«Արարատ-2» (ԱԽ070) խաղի մասին.

«Արարատ-2» թիմի ֆուտբոլիստները հանդիպման 2-րդ խաղակեսին դաշտ դուրս եկան ուշացումով, ինչի արդյունքում 2-րդ խաղակեսի մեկնարկը սկսվեց 4 րոպե ուշացումով: «Արարատ-2» թիմի ֆուտբոլիստների խաղաշապիկներին ազգանունները գրված չէին:

4. 28/11/20թ. «Եղվարդ ֆզ»-«Վեստ Արմենիա ֆզ» (ՖՁ048) խաղին «Եղվարդ ֆզ» թիմի ֆուտբոլիստ Վոլոդյա Սողոմոնյանի (N 18244) հեռացման մասին (ակնհայտ գոլային հնարավորությունից զրկելու համար):

5. 28/11/20թ. «Եղվարդ ֆզ»-«Վեստ Արմենիա ֆզ» (ՖՁ048) խաղին «Վեստ Արմենիա ֆզ» թիմի ֆուտբոլիստ Գևորգ Պողոսյանի (N 36982) հեռացման մասին (նույն խաղում 2 զգուշացում ստանալու համար):

6. 28/11/20թ. «Եղվարդ ֆզ»-«Վեստ Արմենիա ֆզ» (ՖՁ048) խաղին «Եղվարդ ֆզ» թիմի ֆուտբոլիստ Հրանտ Խաչատրյանի (N 36629) հեռացման մասին (բռնարարք կատարելու համար):

7. 28/11/20թ. «Գյումրի աղջիկներ»-«Ալաշկերտ-աղջիկներ» (ԿԲԽ008) խաղի մասին. Հանդիպման 88-րդ րոպեին խաղադաշտի ցանկապատից դուրս «Արթիկ ՖԱ ՀԿ» ակումբի «Հայասա» թիմի սեփականատեր Արտակ Գյոլեցյանը մրցավարների հասցեին վիրավորական արտահայտություններ անելուց հետո, վիճաբանության ու կռվի մեջ էր մտել հանդիսականներից մեկի հետ: Խաղի ավարտից հետո Արտակ

Գյոլեցյանը, Գյումրու ակադեմիայի շենքի մուտքի մոտ շարունակել է անվայել պահվածք դրսևորել հանդիպման գլխավոր մրցավարի նկատմամբ, վիրավորական արտահայտություններ անելով՝ հեռացել:

Հարց. 1

ՈՐՈՇՈՒՄ.

1. 26/11/20թ. «Լեռնային Արցախ»-«Նորավանք» (ԱԽ068) խաղին՝դաշտի տեր ակումբի մի քանի ֆուտբոլիստների մարզաշապիկներին, ինչպես նաև հյուր թիմի դարպասապահի ազգանունները գրված չլինելու համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 33-րդ հոդվածի 66-րդ կետի համաձայն՝ «Լ.Արցախ ՖԱ»-ին և «Նորավանք ՍԱ ՍՊԸ»-ին հայտարարել նկատողություն:

Հարց. 2

ՈՐՈՇՈՒՄ.

2.1. 27/11/20թ. «Ալաշկերտ-2»-«ԲԿՄԱ» (ԱԽ061) խաղին՝ սանիտարական կանոնները չպահպանելու և անվտանգության աշխատակիցների թերի աշխատանք կատարելու համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 33-րդ հոդվածի 41-րդ կետի համաձայն՝ «Ալաշկերտ ՖԱ»-ին տուգանել 50000 ՀՀ դրամի չափով:

ՈՐՈՇՈՒՄ.

2.2. 27/11/20թ. «Ալաշկերտ-2»-«ԲԿՄԱ» (ԱԽ061) խաղին՝ «Ալաշկերտ-2» թիմի ֆուտբոլիստի մարզաշապիկին ոչ համապատասխան ֆուտբոլիստի ազգանվամբ համազգեստով հանդես գալու համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 33-րդ հոդվածի 66-րդ կետի համաձայն՝ «Ալաշկերտ ՖԱ»-ին հայտարարել նկատողություն:

Հարց. 3

ՈՐՈՇՈՒՄ.

3.1. 30/11/20թ. «ԲԿՄԱ»-«Արարատ-2» (ԱԽ070) խաղին՝ «Արարատ-2» թիմի ֆուտբոլիստները հանդիպման 2-րդ խաղակեսին ուշացումով դաշտ դուրս գալու համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 33-րդ հոդվածի 43-րդ կետի համաձայն՝ «Արարատ ՖԱ»-ին տուգանել 10000 ՀՀ դրամի չափով:

ՈՐՈՇՈՒՄ.

3.2. 30/11/20թ. «ԲԿՄԱ»-«Արարատ-2» (ԱԽ070) խաղին՝ «Արարատ-2» թիմի ֆուտբոլիստների խաղաշապիկներին ազգանունները գրված չլինելու համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 33-րդ հոդվածի 66-րդ կետի համաձայն՝ «Արարատ ՖԱ»-ին հայտարարել նկատողություն:

Հարց. 4

ՈՐՈՇՈՒՄ.

4. 28/11/20թ. «Եղվարդ ֆզ»-«Վեստ Արմենիա ֆզ» (ՖՁ048) խաղին՝ «Եղվարդ ֆզ» թիմի ֆուտբոլիստ Վոլոդյա Սողոմոնյանի (N 18244) հեռացման (ակնհայտ գոլային հնարավորությունից զրկելու) համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 41-րդ հոդվածի 9-րդ կետի համաձայն՝ ֆուտբոլիստ Վոլոդյա Սողոմոնյանին որակազրկել 1 խաղով, «Եղվարդի համայնքապետարան»-ին տուգանել 10000 ՀՀ դրամի չափով:

Հարց. 5

ՈՐՈՇՈՒՄ.

5. 28/11/20թ. «Եղվարդ ֆզ»-«Վեստ Արմենիա ֆզ» (ՖՁ048) խաղին՝ «Վեստ Արմենիա ֆզ» թիմի ֆուտբոլիստ Գևորգ Պողոսյանի (N 36982) հեռացման (նույն խաղում 2 զգուշացում ստանալու) համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 41-րդ հոդվածի 8-րդ կետի համաձայն՝ ֆուտբոլիստ Գևորգ Պողոսյանին որակազրկել 1 խաղով, «ՖԱ Վեստ Արմենիա ՀԿ»-ին տուգանել 7000 ՀՀ դրամի չափով:

Հարց. 6

ՈՐՈՇՈՒՄ.

6. 28/11/20թ. «Եղվարդ ֆզ»-«Վեստ Արմենիա ֆզ» (ՖՁ048) խաղին՝ «Եղվարդ ֆզ» թիմի ֆուտբոլիստ Հրանտ Խաչատրյանի (N 36629) հեռացման (բռնարարք կատարելու) համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 41-րդ հոդվածի 13-րդ կետի համաձայն՝ ֆուտբոլիստ Հրանտ Խաչատրյանին որակազրկել 3 խաղով, Եղվարդի համայնքապետարանին տուգանել 30000 ՀՀ դրամի չափով:

Հարց. 7

ՈՐՈՇՈՒՄ.

7.1. 28/11/20թ. «Գյումրի աղջիկներ»-«Ալաշկերտ-աղջիկներ» (ԿԲԽ008) խաղին՝ դաշտի տեր թիմի կողմից խաղի ժամանակահատվածում մարզադաշտում կարգ ու կանոն չապահովելու, երկրպագուների կողմից մրցավարների, պատվիրակի, տեսուչի, ֆուտբոլիստների և պաշտոնատար անձանց հասցեին վիրավորական արտահայտություններ, անհարգալից արարքներ թույլ տալու համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 38-րդ հոդվածի 21-րդ կետի համաձայն՝ «Շիրակ ՖԱ»-ին տուգանել 20000 ՀՀ դրամի չափով:

ՈՐՈՇՈՒՄ.

7.2. 28/11/20թ. «Գյումրի աղջիկներ»-«Ալաշկերտ-աղջիկներ» (ԿԲԽ008) խաղի 88-րդ րոպեին խաղադաշտի ցանկապատից դուրս, այնուհետև Գյումրու ակադեմիայի շենքի մուտքի մոտ խաղի ավարտից հետո «Արթիկ ՖԱ ՀԿ» ակումբի «Հայասա» թիմի

սեփականատեր Արտակ Գյոլեցյանի անվայել վարքագծի դրսևորման համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 38-րդ հոդվածի 23-րդ կետի համաձայն՝ «Հայասա» թիմի սեփականատեր Արտակ Գյոլեցյանին զրկել իր ծառայողական պարտականությունները կատարելու իրավունքից 2 խաղով,արգելել մուտքը մարզադաշտ՝ «Հայասա» թիմի առաջիկա 2 խաղերին, «Արթիկ ՖԱ ՀԿ»-ին տուգանել 50000 ՀՀ դրամի չափով: Նմանատիպ վարքագծի կրկնման դեպքում կկիրառվի ավելի խիստ պատժամիջոց:

ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՍԻՆՈՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ. ՌՇՏՈՒՆԻ

Հիշեցում՝

ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի համաձայն Հոդված 12-ի համաձայն՝ Կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման կարգ.

Կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումները Ֆուտբոլային սուբյեկտների կողմից կարող են բողոքարկվել Բողոքարկման Կոմիտե՝ որոշման մասին պաշտոնական հրապարակման պահից 7 (յոթ) օրվա ընթացքում: